ներն առաջը մեկնելով նա աղաղակեց. «Լէյֆ, Լէյֆ, ինչո՞ւ ես դու այդ անում»։ Ամբողջ ժողովուրդը յետ նայեց։ Հայրը կանգնած էր նորա մօտ և խստութեամբ նայում էր նորա վրայ, բայց աղջիկը չէր նկատում այդ. «Իջիր, Լէյֆ, աղաղակեց նա—ես քեզ սիրում եմ, իսկ այդտեղ վերևից դու ոչինչ օգուտ չես ունենայ»։ Երևում էր, որ Լէյֆը կանգ առաւ՝ մտածմունքի մէջ ընկնելով. այդ տևեց մէկ կամ երկու րոպէ, յետոյ նա սկսեց նորից վեր բարձրանալ. Նորա ձեռներն ու ոտներն ամուր էին, այնպէս որ մի առ ժամանակ ամէն բան լաւ էր գնում. բայց շուտով նա սկսեց յոգնել. այդ երևում էր նորանից, որ նա յաճախ կանգ էր առնում հանգստանալու։ Մի փոքրիկ քար պոկուեց և գլորուեց ներքև ինչպէս մի նշան. բոլոր ցածում կանգնածները հետևում էին նորան, մինչև որ վայր ընկաւ։ Մի քանիսը չկարողացան դիմանալ այդ տեսարանին և հեռացան։ Աղջիկը դեռ շարունակում էր կանգնած մնալ մենակ բարձր քարի վրայ։ Նա կոտրատում էր ձեռները և վեր էր նայում։ Լէյֆը սկսեց իւր առաջը ձեռքով զննել. ձեռը պոկ եկաւ, աղջիկը այդ պարզ տեսնում էր, տղան ուզեց միւս ձեռով բռնել, միւսն էլ պոկուեց. «Լէյֆ» այնպէս բարձր ճչաց աղջիկը, որ նորա ձայնը լսուեց հեռու լեռներում. միւսները ճչացին նոյնպէս. «Նա ցած է սողում» կրկնում էին նոքա և մեկնում էին դէպի նա իրանց ձեռները թէ մարդիկ և թէ կանայք. Նա ճիշտ որ սողում էր ցած իւր հետ քաշելով աւազ, քար, հող. սողում էր աւելի ու աւելի արագ. Ժողովուրդը երեսը յետ դարձրեց. Նոքա շուտով լսեցին իրանց յետևից խշշոց, ճայթիւն և վերջապէս մի ծանր բանի վայր ընկնելը, ինչպէս մի մեծ կտոր՝ թաց հողի։

Երբ վերջապէս ժողովուրդը արեց սիրտ յետ նայել, տեսաւ նորան ջարդուած և անճանաչելի, գետնի վրայ փռուած։ Աղջիկը անզգայ ընկած էր քարի վրայ. Հայրը տուն տարաւ նորան։

Երիտասարդները, որ ամենից շատ էին դրդում նորան դէպի այդ քաջագործութիւնը, հիմայ չէին համարձակւում մօտենալ նորան և օգնել. շատերն էլ չէին կարողանում նոյն իսկ նայել նորան։ Ծերերը պիտի բանի կենային։ Դոցանից ամենամեծը նորան բարձրացնելով ասաց. «Այս մի անմտութիւն էր, սակայն,—աւելացրեց նա վերև նայելով—էլի լաւ է, երբ կայ գոնէ այնքան բարձր կանգնած մի բան, որ նորան ամէն ձեռ հասնել չէ կարող»։

Թարգմ. Զ. Ց.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

ԳԻՏՆԱԿԱՆ։

Մարդկային ցեղը մանրանում է։ — Դոկտոր Դանաէլ մանրազնին ուսումնասիրութեամբ պարզում է, որ մարդկային ցեղը քանի գնում մանրանում է։ Նա իւր ուսումնասիրութեան համար վերցրել է Եւրոպական զանազան պետութիւնների մէջ զինուորակոչի ենթարկուողների հասակը. մինչ առաջ զինուոր էին վերցնում որոշեալ հասակ ունեցողներին, այժմ արդէն ստիպուած են հասակի չափը փոքրացնել, որպէս զի կարելի լինի զօրք ժողովել։ Այդ երևոյթը բացատրում են նրանով, որ այժմ ֆիզիքական մարզողութիւնների վերայ առանձին ուշադրութիւն չեն դարձնում. եւ չարիքի առաջն առնելու համար առաջարկում են ուսումնարանական ծրագրների մէջ ֆիզիքական կրթութիւնը պարտադիր դարձնել։

Պոմպէյի քաղաքի պեղումները։ — 79 թուականին Քրիստոսից առաջ Վեզուվի լերան հրաբուխը լաւայով ծածկեց Հռովմայեցոց երկու գեղեցիկ քաղաքները. Պոմպէյի եւ Հերքուլանում, որոնք գտնւում էին Իտալիայ արեւմտեան կողմում Ապէննեան թերակղզում։ Անցնում են շատ դարեր, մինչեւ որ այդ ողողուած քաղաքները XVI-րդ դարում գրաւում են մարդկանց ուշադրութիւնը։ 1689 թ. նա դառնում է գիտնականների ուսումնասիրութեան առարկայ, իսկ 1748 թ. մինչեւ այսօր շարունակւում են պեղումները։ Եւ ինչպիսի թանգագին հնութեան յիշատակներ են բացւում այդ մեռած քաղաքի մէջ։ Այդ պեղումների հիման վերայ պատմաբանները կարողանում են վերականգնել հին գիտութիւնը, գեղարուեստը, ներքին կեանքը . . . Նորերս էլ Մարկիզ Նադայեաք Correspondens ամսագրի յունուարի համարում գեղեցիկ յօդուած է նուիրել Պոմպէյի քաղաքի հասարակական կեանքի մասին։ Երեւում է, որ Պոմպէի-շատ կենդանի եւ բարգաւաճ քաղաք է եղած, զուարճութիւնների եւ ուրախութիւնների մի տեսակ կենդրոն - ինչպէս այժմ՝ Նիցցան կամ Մօնաէ Կառլոն։ Լաւան ծածկել է ուրախ քաղաքը ուրախացող մարդկանց հետ միասին հէնց այն ժամանակ, երբ սրանք քաղաքական ընտրութիւնների էին պատրաստւում։ Այդ ժամանակ դեռ նոր էր հրատարակուել Սուլլայի օրէնքը, որով Իտալիայի քաղաքներում թոյլատրւում էր մտցնել նոյնպիսի քաղաքային կազմակերպութիւն, որպիսին էր Հռովմում։ Ինչպէս երեւում է ամբողջ Պոմպէյում բնակիչները զբաղուած էին քաղաքային վարչութեան անդամների նախապատրաստական ընտրութիւններով։ Քաղաքի պատերը լի են (Գռաֆֆիտի)—մանրագիր յայտարարութիւններով, որոնցից երեւում է, թէ ով-ում է առաջարկում. այսպիսի գրութիւններ ու կանդիդատներ առաջարկելու ամէն ոք իրաւունք ունէր՝ մինչեւ անգամ կանայք եւ տղայք։ Դրանից յետոյ նշանակում են արդէն իսկական ընտրութիւնները, որտեղ քուէարկում են մեծաւ մասամբ—միայն նրանք, որոնք Գռաֆֆիտոներից կարող են տեսնել՝ որ մեծամասնութիւնը իրանց կողմն է։ Ընտրութեան ժամանակ երեւում է, որ մեծ դեր էին խաղում գովողութիւնները (Կոռապրասիոն) եւ ակմբանոցները, որոնք, ի դէպ ասած, տարօրինակ անուններ էին կրում, ինչպէս օրինակ «Փոքրիկ գողերի», «Քնկոտ տղերանց», «Բարի ուրախակիցների» եւ այլն։ Այսպէս պեղումները մեր առաջ կարողանում են պատկերացնել անցած գնացած դարերի՝ կեանքը, ուրախութիւնը, հակումները եւ այլն եւ այլն։

Ուրեմն որքան մեծ նշանակութիւն ունեն հնագիտական պեղումները առհասարակ եւ մանաւանդ մեր հայրենիքում, որտեղ այնքան շատ են գետնի տակ մնացած յիշատակներ մեր հին փառքի եւ այնքան քիչ մարդիկ կան նրանց մասին մտածող, հոգս քաշող։ Շատերից յիշենք

միայն՝ Դուլին, Արտաշատ, Արմաւիր, նոյն իսկ Անին, որը համեմատաբար ուրիշներից աւելի է արժանացել ուշադրութեան: Որոնք բոլորն էլ ծածկուած հողի տակ անշուշտ պահում են բազմաթիւ եւ հետաքրքրական պատմութիւններ իրանց անցած կեանքից, որի հետ ի հարկէ ամէն մի հայ կուզենար ծանօթ լինել: Ուրեմն ամէն մի հայ էլ իւր կարեաց չափով ինչպէս կարող է՝ թող աշխատի գետնի տակից լոյս աշխարհ հանել մեր ազգային հնութիւնները, ինչպէս այդ անում են լուսաւորուած Եւրոպայում:

Դրաշար Մեքենայ.—Սիկիլեայ կղզու Դոմինիկանեան միաբան հայր Կալէնդոլին մի նոր եւ նշանաւոր գիւտ է արել: Նա հնարել է մի այնպիսի գրաշար մեքենայ, որը մեծ փոփոխութիւն պիտի մտցնէ տպարանական գործի մէջ: Մեքենայի կազմակերպութիւնը, որը յիշեցնում է դաշնամուրի կազմակերպութիւնը, բաւական խրթին է, բայց գործածութիւնը հեշտ է: Մեքենայի գլխաւոր արժէքը նրանումն է, որ նրանով գրաշարը պիտի շարէ շատ աւելի արագ քան մինչեւ այժմս շարում է. այս մեքենայով կարելի է մի ժամում մինչեւ 50,000 տառ շարել եւ մինչդեռ այժմս ամենալաւ գրաշարը 2,000 տառից աւելի չէ կարողանում շարել: Բացի դրանից, որովհետեւ այս մեքենան շարում է ելէկտրական ոյժի միջոցով, ուստի — մի մարդ, միաժամանակ կարող է միեւնոյն գիրքը շարել մի քանի զանազան տեղերում - օր՝ կանգնած Ս. Էջմիածնի տպարանում նա կարող է շարել մի որ եւ է յօդուած՝ Թիֆլիսում, Պարիզում եւ այլն: Դրա համար հարկաւոր է միայն, որ այդ քաղաքներումն էլ լինեն այդպիսի մեքենաներ, եւ նրանք միացած լինեն ելէկտրական հոսանքով .... Մի լրագիր այս լուրը արտատպելով հետեւեալ կարծիքն է յայտնում, թէ արդեօք այդ այդպէս է, որպէս նկարագրում են՝ դժուար է վճռել: Բազմաթիւ գրաշար մեքենաներ են երեւացել, նրանց գովում էին, բայց երբ որ սկսում էին գործադրել՝ շատ անյարմար էին դուրս գալիս:

Երկրագնդի ամբողջ ազգաբնակութիւնը ըստ դաւանութեան:

Քրիստոնեաներ	490 միլիոն	51 %
Կաթոլիկներ . . .	245 միլ.	15, 6 %
Բողոքականներ . . .	140 միլ.	8, 9 %
Յունադաւան . . .	96 միլ.	— 6 %
Լուսաւորչական . . .	5 միլ.	0, 2 %
Միւս քրիստոնեաներ . .	6 միլ.	0, 4 %
Մահմեդականներ . .	175 միլ.	11, 3 %
Հրէաներ . . .	8 միլ.	0, 5 %
Հեթանոսներ . . .	891 միլ.	57, 1 %
Բուդդայական . . .	500 միլ.	52, 2 %
Բրահմինական . . .	146 միլ.	9, 7 %
Փետիշներ (կռապաշտներ) .	245 միլ.	15, 2 %

— Երկրագնդի ազգերի լեզուն հաշուում են աւելի քան 3,600 բարբառ, բոլոր կրօնները 1000-ից աւելի են:

— Ամենամեծ քաղաքները աշխարհիս մէջ. Լօնդօն 5,637,000 բնակիչ. Պեկին 4,500,000 բնակիչ. Փարիզ 2,550,000 բնակիչ. Նիւ-Եօրք 1,628,445 բնակիչ. Բեռլին 1,584,956 բնակիչ. Վիեննա 1,568,000 բնակիչ՝ Պետերբուրգ, 1,015,000 բնակիչ. Կ. Պօլիս 874,569 բնակիչ. Մօսկվա 869,079 բնակիչ. Նէապօլիս 515,079 բնակիչ:

— Բոլոր պարբերական հրատարակութիւնները աշխարհիս երեսին մօտ 56,000, որոնցից Եւրոպայում մօտ 20,000. Ասիայում՝ 3,000, (որոնցից մօտ 2,000 Ճապոնիայում). Աֆրիկայում՝ 200 (որո՛ցից 30 Եգիպտոսում). Միացեալ նահանգներում մօտ 12,500. Աւստրալիայում՝ 700 թերթ:

— Մահացութիւն եւրոպական պետութիւնների մէջ 1000 բնակչի վրայ Հունգարիայում 38,7. Ռուսաստանում՝ 35,8. Գերմանիայում, Աւստրիայում, Փրանսիայում, Զուիցերիայում, Բելգիայում եւ Անգլիայում 21, 9-ից մինչեւ 26, Շվեդիայում՝ 19,2. Նորվեգիայում՝ 16,9. Իրլանդիայում 17, 5:

— Ռուսաց եկեղեցին ունի 62 թեմ. 3 միտրոպոլիտ, 15 արքեպիսկոպոս, 44 եպիսկոպոս, 35 յաջորդութիւն (викаріатъ(730 մենաստան, 6805 կուսակրօն, 3374 դպիր (մոնթ — послушники) 194 կուսանոց, 6025 կոյս, 15,888 դպրուհի. 43,428 եկեղեցի, 680 մայր եկեղեցի (соборъ), 1448 աւագ քահանայ, 34,375 քահանայ, 6840 սարկաւագներ, 42,571 սաղմոսերգուներ. գումարը 84974 հոգի:

— Պետութեան ազգային լուսաւորութեան համար ծախսում է մօտ 44,219,690 ր.: Ռուսաստանում բոլոր միջնակարգ, ստորին եւ մասնագիտական դպրոցների թիւը (առանց Ֆինլանդիայի) 40,447 ու 2,306,294 ուսանողներով:

Եկեղեցական ծխական եւ գրագիտական դպրոցների թիւը մօտ 17,315 եւ 475,275 ուսանողներով:

— Ռուսաստանի ապրանքների արտահանութիւնը 705,996,972 ր. ներմուծումն արտասահմանից 446,085,478 րուբլու: Տօնավաճառներ մօտ 7000, եւ 450 միլիոն րուբլու շրջանառութեամբ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Գրութեան ցանցաւոր տետրակներ:—189 [illegible] ուսումնարանական տարուա ընթացքում-Թիֆլիզի հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների գծագրութեան ուսուցիչները նոր ծրագիր մշակելով գծագրութեան համար, գտել էին, որ Շուլմանի մեթոդով ցանցագիծ տետրակներով գծագրութեան դասատուութիւնը վնասակար ազդեցութիւն է ունենում աշակերտների թէ առողջութեան եւ թէ առաջադիմութեան վրայ: Այդ միեւնոյն խնդիրը յուզուած էր նաեւ Գերմանիայում: Դեռ 1880 թուին Բրեմէնի ուսուցչական ժողովի առաջարկութեամբ ուսուցիչ Գրեբերը դիմել էր զանազան հեղինակաւոր անձանց՝ գծագրութեան դասատուութեան Շուլմանի մեթոդի մասին նրանց կարծիքը հարցնելով:

Գրեբերի առաջարկութեան պատասխանել են 72 ակնաբոյժներ, որոնցից 18 հոգի բոլորովին դէմ են աշակերտներին մանկական մատաղ հասակում (6—9 տարեկան) սիստեմատիքական գծագրութեան դասեր աւանդելուն. 66 հոգի բոլորովին հակառակ են Շուլմանի սիստեմին, իսկ 5 հոգի աչքի համար անվնաս են համարում այդ մեթոդը, եթէ ցանցերը խոշոր են եւ պարզ:

Այնուհետեւ ստացուել է 36 պատասխան զանազան մանկավարժներից եւ մանկավարժական ընկերութիւններից, դրանք բոլորն էլ, բացի մէկից, հակառակ են Շուլմանի մեթոդին: Այդ եղանակին հակառակ են նաեւ մի քանի յանձնաժողովների կարծիքները, իսկ Բաւարիայում մինչեւ իսկ արգելուած է ցանցերով դասաւանդութիւնը:

Պրոֆեսոր Ցեհենդերը յիշելով այս ամէնը, խնդիր է յարուցանում նաեւ գրութեան մասին. նրա կարծիքով 3—4 գծերի վրայ տառեր գրելը անպէտք է եւ վնասակար. նոյն իսկ սիստեմատիքական գրութիւն էլ առաջարկում է աւելի ուշ սկսել, երբ արդէն մանուկի ձեռքը հաստատուն կերպով գրիչ բռնելու ընդունակ կը դառնայ:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ.

Զախէր Մազօխ: — Փետրուարի 25-ին հեռագիրը հաղորդեց Աւստրիացի վիպասան Զախէր—Մազօ-

խի մահուան լուրը։ Զ.—Մ.-ը ծնել է 1856 թ. Լվով քաղաքում։ Սկզբից նա պատմութեան պրոֆէսսոր էր, սակայն յետոյ թողեց գիտութիւնը եւ ինքն իրան բոլորովին նուիրեց գրականութեան եւ արդէն 30-ական թուականներում մեծ ժողովրդականութիւն է ստանում թէ իւր հայրենիքում եւ թէ հայրենիքից դուրս։ Ակայտ չէ եւ մեզ այդ հեղինակը շնորհիւ Բաֆֆու՝ նրա գեղեցիկ գրութիւններից մէկի թարգմանութեանը. դա Զ. Մ. Նայէնի կտակն է։ Թէպէտ եւ հանգուցեալը առաջնակարգ տաղանդներից չէր, բայց իւր մարդասիրական վերաբերմունքով դէպի խղճուկ գիւղացիները, հարստահարուած—հրեան եւ այլն, նա միշտ վայելում էր ընթերցողի համակրանքը։

Կոմս Լեւ Տոլստոյի նոր վէպը։—Հռչակաւոր ռուս վիպասան Լեւ Տոլստոյը, որը վերջին տարիներս կարծես թողել էր վիպասանութիւնը եւ զբաղուում էր բացառապէս ժողովրդական գործերով ու բարոյական—փիլիսոփայական հարցերով, մարդ ամսում հրատարակեց «Մէվէնիյ վեստնիկ» ամսագրում իւր նոր վէպիկը «Տէրը եւ ծառան»։ Հեղինակը վէպիկի մէջ յայտնում է նոյն մտքերը, ինչ որ եւ փիլիսոփայական յօդուածներում, եւ որ իսկապէս Ս. Աւետարանի քարոզն է. ապրել—ուրիշի համար, ընկերին օգնելու մէջ բաւականութիւն գտնել, չը դիմադրել չարեաց, մտածել աւելի հոգւոյ մասին եւայլն եւայլն։ Գեղարուեստական կողմից վէպիկը—մի գլուխ գործոց է։



ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ։

Նորին Օծութիւնը փետրուարի 6-ին բարեհաճեց մեկնել Թիֆլիսից՝ Բաթումի վրայով Ռուսաստան ուղևորուելու։ Ճանապարհին ամենուրեք Վեհափառ Հայրապետին ընդառաջ էին ելնում զանազան պատգամաւորութիւններ այլ եւ այլ գիւղերից ու քաղաքներից, իսկ մերձակայ տեղերի ժողովուրդը բոլոր կայարաններում, ուր Հայրապետական գնացքը կանգ էր առնում, բերկրալից աղաղակներով եւ սրտաբուղխ «կեցցէ»ներով էր ողջունում իւր պաշտելի Հայրիկին եւ ողջերթ եւ բարի վերադարձ մաղթում նորան։

Բուռն ոգևորութեամբ ընդունեց ժողովուրդը Վեհափառ Հայրապետին նաև Բաթումում, ուր Նորին Օծութիւնը բարեհաճեց իջնել պ. Ա. Մանթաշեանի պատրաստած ընակարանում։ Իւր բոլոր հետևորդներովն հանդերձ։ Մի շաբաթ Բաթումում մնալուց և Իւր հօտը մխիթարելուց ու օրհնելուց յետոյ՝ փետրուարի 14-ին Վեհափառ Հայրապետը «Կոստանդին» շոգենաւով մեկնեց դէպի Նովորոսիյսկ, ուր Նորան դիմաւորելու էր եկել Եկատերինոդար քաղաքի Հայ հասարակութեան կողմից մի առանձին պատգամաւորութիւն։ Նովորոսիյսկից ևս յատուկ գնացքով Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց ուղևորուել դէպի Եկատերինոդար, ուր իջևանեց Թորոսեան եղբարց հոյակապ տանը։

Փետրուարի 16-ին Նորին Վեհափառութեան հրամանով Գեր. Կարապետ եպիսկոպոսը Եկատերինոդարի հայոց եկեղեցում մասնաւոր վարդապետութեան իշխանութիւն տուեց բար. Տիրայր աբեղային, որ նշանակուած է Պետերբուրգի և Մոսկուայի հայոց հոգևոր հովիւ և հոգևոր կառավարութեանց նախագահ։

Նոր Արմաւիրից մի յատուկ պատգամաւորութիւն եկած էր Եկատերինոդար՝ խնդրելու Նորին Օծութիւնից, որ բարեհաճէ այցելել Արմաւիրը և մխիթարել այն տեղի հայ ժողովրդին։ Վեհափառ Հայրապետը զիջանելով դոցա թախանձանացը՝ արտակարգ գնացքով ուղևորուեցաւ դէպի Արմաւիր, ուր և ժամանեց փետրուարի 21-ին և ընդունուեցաւ զարմանալի ոգևորութեամբ։

Արմաւրում մնալով մինչև փետրուարի 25-ը, Նորին Օծութիւնը Նոր-Նախիջևանից եկած առանձին պատգամաւորութեան ուղեկցութեամբ, նոյն Նոր-Նախիջևանցոց պատրաստած արտակարգ գնացքով մեկնեց դէպի Ռոստով, ուր ժամանեց յաջորդ օրը առաւօտեան 11 ժամին։ Ռոստովի կայարանում Վեհափառ Հայրապետին դիմաւորեցին մարմնաւոր իշխանութեան ներկայացուցիչները, Նոր-Նախիջևանի, Տագանրօգի և այլ քաղաքների ու հասարակութեանց կողմից պատգամաւորութիւններ և ժողովրդեան խուռն բազմութիւն։ Կայարանից բազմաթիւ կառքերի ու ձիաւորների ուղեկցութեամբ հանդիսաւոր գնացքը Ռոստովի միջով ուղղուեցաւ դէպի Նախիջևան, ուր ամենաշքեղ ընդունելութիւն էր պատրաստուած։ Քաղաքը զարդարուած էր դրօշակներով, խանութները փակած էին, և բոլոր ժողովուրդը շտապել էր ողջունելու իւր սիրեցեալ Հայրապետին և տեսնելու Նորան։ Որի Նոր-Նախիջևանն այցելելու մտադրութեան լուրը արդէն անչափ ուրախացրել էր և ոգևորել այդ քաղաքի բարեպաշտ հայ ժողովրդին։ Վեհափառ Հայրապետը իջաւ կառքից ս. Լուսաւորիչ եկեղեցու առաջի հրապարակում և ամպհովանու տակ մնալով՝ անցաւ տաճարը, ուր Իւր սովորական աղօթքն անելուց յետոյ, բարեհաճեց գնալ Նորին Սրբութեան և Իւր ուղեկիցների համար պատրաստուած շքեղ ընակարանը, պ. Կրասիլնիկեանի տունը։

Ժողովրդեան ցնծագին տաղաղակներին ու բերկրութեանը սահման չկար. մինչև խորին դիշեր, երբ փառաւոր հրավառութիւն տեղի ունեցաւ, ոգևոր-